ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

«ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» առարկայի քաղաքացիական կրթություն բաղադրիչը

(10-12-րդ դասարաններում իրականացված հետազոտության արդյունքներ)

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ
COMMITMENT TO CONSTRUCTIVE DIALOGUE

Open Borders
INSTITUTE OF PEACE, DEMOCRACY AND DEVELOPMENT

ԳԱՎԱՌ 2019

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Սույն հետազոտությունը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Բաց սահմաններ» խաղաղության, ժողովրդավարության և զարգացման ինստիտուտ հասարակական կազմակերպության կողմից իրականացվող ««Էդու-լոջիք» հավասար մեկնարկ» ծրագրի շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Բաց սահմաններ» խաղաղության, ժողովրդավարության և զարգացման ինստիտուտ հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

«Հասարակագիտություն» առարկայի քաղաքացիական կրթություն բաղադրիչը

(10-12-րդ դասարաններում իրականացված հետազոտության արդյունքներ)

Ծրագրի ղեկավար՝ *Էլեոնորա Բեգոյան*
Հետազոտող՝ *Գոհարիկ Տիգրանյան*
Մեթոդաբան՝ *Վարդան Վարդանյան*

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ
COMMITMENT TO CONSTRUCTIVE DIALOGUE

Open Borders
INSTITUTE OF PEACE, DEMOCRACY AND DEVELOPMENT

«Բաց սահմաններ» խաղաղության, ժողովրդավարության և զարգացման ինստիտուտ հասարակական կազմակերպության համար թիրախային են մարդու իրավունքների, ինչպես նաև հատուկ ուշադրության արժանի կանանց իրավունքների և իրավահավասարության իրացումը, ոչ ֆորմալ կրթության միջոցով արդար, հավասար և հանդուրժող հասարակարգի ստեղծումը: Կազմակերպության նպատակն է նպաստել և աջակցել երիտասարդներին ունենալ ակտիվ մասնակցություն հասարակական, սոցիալական և տնտեսական կյանքում, իրենց ձայնը հասցնել նշված ոլորտներում որոշում կայացնող օղակներին: Կազմակերպությունն իր նպատակին հասնելու համար ստեղծում է երկխոսության հարթակներ երիտասարդներ-որոշում կայացնողների միջև՝ ստեղծելով խաղաղ, հանդուրժող, իրավահավասար, ժողովրդավար և արդար հասարակություն՝ թափանցիկ կառավարմամբ: Կազմակերպությունը նպատակ է հետապնդում կրթության ոլորտում մշակել հանրային քաղաքականության և բարելավման ծրագիր, քանի որ ոլորտի անմիջական կարգավորումը և խնդիրների լուծումը բխում է Կազմակերպության շահառուների շահերից: Մեզ համար շատ կարևոր է երիտասարդների համար ստեղծել նպաստավոր պայմաններ, որպեսզի իրենց ըստ արժանվույն և լիարժեք դրսևորեն երկրի սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքում, լինեն մրցունակ թե՛ ներքին, և թե՛ արտաքին աշխատաշուկայում, ինչու՞ չէ, լինեն նաև գործատու և աշխատատեղեր ստեղծող: Այդ ամենի հիմնասյուն համարում ենք որակյալ և մրցունակ կրթությունը: Իսկ լիարժեք հաջողություն ունենալու համար մեզ անհրաժեշտ է փոփոխություններ կատարել կրթության ոլորտում՝ բարեփոխումներ իրագործելով հանրակրթական դպրոցներից մինչև բարձրագույն ուսումնական հաստատություններ: Մենք ապահովելու ենք մեր ամեն մի քայլով կոնկրետ խնդրի լուծում՝ միևնույն ժամանակ ապահովելով թափանցիկ և արդյունավետ գործունեություն:

«Բաց սահմաններ» ՀԿ նախագահ՝
Էլեոնորա Բեգոյան

Բովանդակություն

Ներածություն .....

Միջազգային, տարածաշրջանային, տեղական իրավական փաստաթղթերը և ժողովրդավարությունը .....

«Հասարակագիտություն» քաղաքացիական կրթություն .....

Առարկայական դասագրքերն ու նրանց նկատմամբ վերաբերմունքը.....

Եզրակացություն .....

Օգտագործված գրականության ցանկ.....

Ներածություն

«Հասարակագիտություն» առարկան մտավ ՀՀ կրթական համակարգ և դարձավ պարտադիր ուսուցանվող առարկա հանրակրթական դպրոցներում, երբ ՀՀ-ում խորանում էր քաղաքական ճգնաժամը: Քաղաքացիական հասարակության մի շարք ներկայացուցիչների կազմակերպված բողոքի ակցիաների ժամանակ ՀՀ քաղաքացուց քիչ աջակցություն էին ստանում: Սրա պատճառները բազում էին, բայց գլխավորը այն էր, որ ՀՀ քաղաքացին ուներ քաղաքացիական գիտակցության և փորձառության պակաս, որի բացը հանրակրթության մեջ, 2008թ.-ից սկսած, պետք է լրացներ առարկայացանկ մտած «Հասարակագիտություն» առարկան: Ըստ առարկայական չափորոշիչների՝ «Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող ժողովրդավարացման գործընթացները պահանջում են քաղաքացիական այնպիսի որակների դաստիարակում, ինչպիսիք են սեփական իրավունքների ու պարտականությունների գիտակցումն ու իրականացումը, դրական մասնակցությունն առաջնորդություն... Ժողովրդավարական հասարակության քաղաքացիներն իրենք պետք է լինեն սեփական կրթության պատասխանատուն, պետք է կարողանան դնել համապատասխան նպատակներ և հասնել դրանց, ի վիճակի լինեն արժևորել իրենց տեղն ու դերը հասարակության մեջ: Այս նպատակներին հասնելու տեսնակյունից անգերազանցելի է հասարակագիտության կրթական նշանակությունը»[1]: Պարզ է դառնում, որ առարկան, որն սկսվում է դասավանդվել 8-րդ դասարանում և ավարտվում՝ 12-րդ դասարանում, ի սկզբանե ունեցել է կարևոր նշանակություն քաղաքացի կրթելու գործում: Սակայն ժամանակը ցույց տվեց, որ ժամանակի ընթացքում որոշակի խնդիրների պատճառով առարկային պատշաճ ժամանակ և կարևորություն չի տրվել: ՀՀ-ում 2018 թվականին հաջորդած փոփոխությունների արդյունքում և նոր կառավարության ծրագրում կարևորվել է քաղաքացիական կրթությունը՝ որպես հանրակրթության բաղկացուցիչ մաս և առաջիկայում սպասվող փոփոխություններից անմասն չեն մնալու նաև վերոնշված առարկան և նրա չափորոշիչները:

Այս հետազոտության նպատակն է ուսումնասիրել «Հասարակագիտություն» առարկայի 10-12-րդ դասարանների ուսումնական ծրագրերը և հասկանալ, թե որքանով են դրանք

[1]«Հասարակագիտություն, Հանրակրթության ավագ դպրոցի չափորոշիչներ և ծրագրեր», էջ 5, 2009թվ.:

խթանում քաղաքացիական կրթությունը՝ հիմք ընդունելով Գեղարքունիքի մարզի դպրոցներում կատարած հետազոտության արդյունքները:

Հետազոտության խնդիրներն են՝

- Ուսումնասիրել միջազգային, տարածաշրջանային և տեղական իրավական փաստաթղթերը և հասկանալ, թե ինչ բովանդակություն են նրանք հաղորդում կրթությանը:
- Համեմատել և հասկանալ, թե փաստաթղթերում առկա արժեքները ինչպես են արտացոլված «Հասարակագիտություն» առարկայի չափորոշիչներում և դասագրքերում:
- Ուսումնասիրել և բացահայտել 10-12-րդ դասարանի աշակերտների վերաբերմունքը առարկայի նկատմամբ:
- Ուսուցիչների և աշակերտների հետ քննարկումների արդյունքում բացահայտել, թե ինչ բացթողումներ և առաջարկություններ ունեն նրանք առարկան ավելի գրավիչ և արդյունավետ դարձնելու համար:

Հարկ է նշել, որ հետազոտության մի մասը, մասնավորապես՝ ֆոկուս խմբային քննարկումներն ու քանակական գնահատումը կատարվել է Գեղարքունիքի մարզի դպրոցներում, սակայն հարցերի ճկունությունը թույլ է տալիս այն տեղայնացնել նաև այլ մարզերում ավելի համապարփակ արդյունքներ ստանալու համար՝ դարձնելով օգտագործված գործիքը հետազոտության ուժեղ կողմ:

Հետազոտության համար օգտավորձվել են որակական և քանակական հետազոտական մեթոդներ, մասնավորապես՝

- Միջազգային, տարածաշրջանային և տեղական իրավական փաստաթղթերի քննում և արժեքների դուրսբերում
- Դասագրքերի բովանդակային քննություն
- Ֆոկուս խումբ քննարկումներ (նախապես մշակված հարցաշարերով)
- Առարկայի կարևորության գնահատում (նախապես մշակված աղյուսակով):

Առաջին փուլում միջազգային իրավական փաստաթղթերից ընտրվել են նրանք, որոնց նկատմամբ ՀՀ-ն ստանձնել է միջազգային պարտավորություններ՝ վավերացրել է կամ խորհրդի

անդամ երկիր է: Այդ փաստաթղթերից դուրս են բերվել կրթության իրավունքին և էությանը վերաբերող հոդվածներն ու ենթակետերը, որոնք առանձնապես անդրադառնում են կրթության բնույթին, խոսում են մարդու իրավունքների կրթության, քաղաքացիական ակտիվության և հասարակության լիիրավ անդամ լինելու մասին:

Երկրորդ փուլում դասագրքերի բովանդակային հետազոտության համար հիմք է ընդունվել Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարության քաղաքացիական կրթության և մարդու իրավունքների կրթության մասին խարտիան»՝ առանձնացնելով բանալի բառեր

- Ժողովրդավարություն և իրավունք
- Հասարակական պատասխանատվություն
- Բազմազանության տարածում
- Հասարակական ակտիվ գործունեություն, մասնակցություն

Հետազոտության առաջին և երկրորդ փուլերի ավարտից հետո կազմվել են ՖԽ-ի հարցարանները՝ հիմք ընդունելով դուրս բերված բանալի բառերը, իրավական և բովանդակային հետազոտությունների արդյունքները: Ֆոկուս խմբային քննարկումները իրականացվել են Գավառում և հարակից համայնքներում՝ հետազոտական նախնական փուլում արդեն իսկ ունենալով պայմանավորվածություն համայնքերի դպրոցների և ուսուցչական անձնակազմի հետ և ստանալով թույլտվություն դպրոցներիում աշխատելու համար: Ընդհանուր իրականացվել են թվով 10 ֆոկուս խմբային քննարկումներ աշակերտների և մեկ քննարկում հասարակագիտության ուսուցիչների հետ: Աշակերտների թիվը կազմել է 74, իսկ ուսուցիչների խումբը բաղկացած էր 12 մասնակիցներից: Հանդիպումներում ներգրավված են եղել Ծովազարդի, Նորատուսի N3, Գավառի N7, Գավառի N1 հատուկ, Գավառի ավագ դպրոց, Ծաղկաշեն, Կարմրագյուղի N1, Լանջաղբյուրի և Գեղարքունիքի դպրոցների ներկայացուցիչները՝ ուսուցիչների դեպքում առարկան դասավանդող, իսկ աշակերտների պարագայում յուրաքանչյուր դասարանից գնահատման ներկայիս բալային համակարգով ցածր, միջին և բարձր առաջադիմություն ցույց տվածները: Հետազոտության արդյունքներն ամփոփվել են՝ ներառելով ծրագրի շրջանակներում իրականացրած համաժողովի արդյունքները, որտեղ մասնակցել են ՀՀ Գեղարքունիքի մարզի 25 հանրակրթական դպրոցներ՝ թվով 130 ուսուցիչ և աշակերտ:

Յուրաքանչյուր դպրոցում աշակերտների հետ ՖԽ քննարկումներից հետո նրանց տրվել են գնահատման թերթիկները, որով և գնահատվել և որոշվել է առարկայի տեղը աղյուսակում:

Միջազգային, տարածաշրջանային, տեղական իրավական փաստաթղթերը և ժողովրդավարությունը

Ժողովրդավարությունը կառավարման ձև է, որը անմիջականորեն կապված է մարդու իրավունքների հետ: Մի կողմից սա հովանի համակարգ է, որը երաշխավորում է բոլոր մարդկանց իրավունքները, իսկ մյուս կողմից այն պահանջում է մասնակցություն, որը ձևավորում է փոխադարձ կապի ինստիտուտը: Հայտնի քաղաքագիտական տեսաբան Ռ. Դալը ասում է. «Ոչ մի ժամանակակից պետությունում չի հանդիպում ժողովրդավարություն, այն կարծես տեսական ուտոպիա լինի: Իսկական ժողովրդավարության 5 չափանիշ գոյություն ունի.

1. ***Արդյունավետ մասնակցություն*** - քաղաքացիները պետք է ունենան համապատասխան և հավասար հնարավորություններ ձևավորելու/ընտրելու իրենց նախընտրածը և հասարակական օրակարգում առաջ քաշելու հարցեր, պատճառաբանելու մեկ վերջնարդյունքը մյուսի նկատմամբ:
2. **Որոշիչ մակարդակներում** և փուլերում քվեարկության հավասարություն - յուրաքանչյուր քաղաքացի պետք է համոզված լինի, որ իր կարծիքը հավասարպես դիտարկվում է և ունի նույն կշիռը, ինչ որ մյուսինը:
3. **Տեղեկացվածություն** - քաղաքացիները պետք է համոզված լինեն, որ ունեն ընդարձակ և հավասար հնարավորություն ընտրելու, ինչը կարող է ծառայել իրենց հետաքրքրություններին:
4. **Օրակարգի վերահսկողություն -** մարդիկ պետք է ունենան հնարավորություն՝ որոշելու՝ ինչ քաղաքական հարցեր կան, և ինչը պետք է դառնա քննարկման առարկա:
5. **Ներառականություն -** հավասարությունը պետք է տարածվի պետությունում եղած բոլոր քաղաքացիների վրա: Յուրաքանչյուրն ունի օրինական հիմք/սատարում քաղաքական գործընթացներում»[2]:

Նշված տեսությունը առաջ է քաշում, որ քաղաքացիները

[2]Ռ. Դալ, «Դեմոկրատիան և իր քննադատություն», Յելի համալսարանական հրատարակչություն; 1989, էջ 117:

ժողովրդավարության հիմքն են, սակայն առանց արդյունավետ մասնակցության ոլորտում հաջողություն գրանցելը դժվար և երկարաժամկետ գործընթաց է: Քաղաքացին՝ իր ընտրությամբ և քայլերով, մատնանշում է, թե ինչն է իր և համայնքի համար լավ, և որն է համայնքի գլխավորը շահը, որն էլ իր հերթին զարգացնում է վերջինս: 2018 թվականի ապրիլ - մայիս ամիսներին՝ «Թավշյա հեղափոխության» ընթացքում, քաղաքացիական մասնակցության գրանցված մակարդակը աննախադեպ էր և տարածված ՀՀ գրեթե բոլոր մարզերում: Այս հաջողության մասին է խոսում միջազգային տարբեր ինդեքսներում ՀՀ դիրքի բարելավումը: Օրինակ՝ համաձայն Ժողովրդավարության ինդեքսի 2018թ. զեկույցի՝ այն բարելավել է իր դիրքերը նախորդ տարվա համեմատ՝ 111-ից 104: Որպես զարգացող երկիր՝ Հայաստանը ամենացածր արդյունքները գրանցել է քաղաքական մշակույթի ինդեքսով (2.50), այնինչ քաղաքացիական ազատությունների ինդեքսը հասնում է 5.59, իսկ ընտրական պրոցեսներն ու բազմակարծությունը՝ 5.67[3]: Թրանսփարենսի ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի 2018 թ.-ի կոռուպցիայի ինդեքսը ցույց է տալիս, որ ՀՀ-ն բարելավել է իր դիրքերը՝ աղյուսակում նախորդ՝ 2017թ.-ի համեմատ՝ 107-ից բարձրանալով 105-րդ հորիզոնական[4]: Չնայած վերոնշված դրական տեղաշարժերին՝ իրավիճակը շարունակում է կոչվել անցումային, և ՀՀ կառավարությունն էլ շարունակում է քայլեր ձեռնարկել ժողովրդավարացման գործընթացում զարգացումներ գրանցելու համար:

Ժողովրդավարության հաջողության համար կարևորագույն նախադրյալներից մեկը կրթությունն է՝ միտված զարգացնել սովորողի միտքը, խթանել վերլուծական և քննադատական մտածողությունը: Ժողովրդավարությանը ձգտող հասարակություններում կրթությունը պետք է միտված լինի տալ գիտելիք, հմտություն և փորձառություն, որոնք էլ իրենց հերթին միտված են տարածել ժողովրդավարական արժեքներ: Հետևաբար, կրթությունը հասարակության և կառավարության ներդրումն է երիտասարդների մեջ՝ «նորեկներին» ցույց տալու իրականությունն, ու թե ինչպես այն կարող է փոխվել: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է ստեղծել կրթական միջավայր, որը կամրապնդի սովորողի՝ իր ուժերի նկատմամբ հավատը՝ միևնույն ժամանակ

[3]Ժողովրդավարության ինդեքս 2018, http://www.eiu.com/Handlers/WhitepaperHandler.ashx?fi=Democracy_Index_2018.pdf&mode=wp&campaignid=Democracy2018

[4]Կոռուպցիոն կատարման ինդեքս 2018,https://www.transparency.org/cpi2018.

անհատներին հնարավորություն տալով ազատորեն արտահայտնել իրենց կարծիքը: Հասարակության և անհատի միջև հավասարակշռությունը պետք է հաստատվի անհատի համար ապահով միջավայրում, որտեղ գոյություն ունեն հնարավորություններ զարգացնել «ես», «նա» և «մենք» գաղափարները: Սա էլ կուղղորդի միջանձնային հարաբերությունների զարգացմանը և անհատների միջև համագործակցության խթանմանը: Կրթության՝ մասնավորապես հանրակրթության միջոցով, հնարավոր է տարածել բազմազանության գաղափարը՝ հստակեցնելով «արժանապատվություն» հասկացությունը:

Վերոնշված գաղափարին հասնելու և անհատի ձևավորման համար անհրաժեշտ է փոխել ՀՀ-ում կրթական փիլիսոփայությունը՝ սովորողին դարձնելով կրթական փորձառության սուբյեկտ՝ օբյեկտի փոխարեն: Յուրաքանչյուր սովորողի անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն որպես գիտելիք ստացողի, այլ նաև գիտելիք տվողի: Այսպիսով, կրթությունը կարող է դառնալ մի շղթա, որտեղ սովորողին կտրվեն գործիքներ գիտելիքը բացահայտելու և կիրառելու համար՝ ձեռք բերելով հմտություններ և փորձառություն:

Այսպիսի շղթայում դպրոցներն այս շղթայում հսակայական դեր են խաղում՝ հանդիսանալով հենց այն ապահով միջավայրը, որտեղ յուրաքանչյուր աշակերտ ունի բոլոր հնարավորությունները ստանալու և փորձարկելու իր համար նախատեսված գիտելիքի բաժինը:

Վերոհիշատակյալ բոլոր գաղափարների զգալի մասը ներառված և ամրագրված է Կրթության իրավունքին վերաբերող մի շարք միջազգային փաստաթղթերում: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում կրթության իրավունքը ամրագրված է որպես մարդու հիմնարար իրավունք (հոդ. 26 մաս 2). «Կրթությունը պետք է նպատակաուղղված լինի անձի լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը: Այն պետք է նպաստի բոլոր ազգերի, ռասսայական և կրոնական խմբերի միջև փոխըմբռնմանը, հանդուրժողականությանն ու բարեկամությանը, էլ ավելի նպաստի Միավորված ազգերի կազմակերպության խաղաղապահպան գործունեությանը»[5]: Այս հոդվածը ամրապնդում է այն միտքը, որ կրթությունը միայն դպրոցի պատերի ներսում ֆիզիկապես գտնվելը չէ, այլ գիտե-

[5]«Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր», 1948, http://www.un.am/res/Human%20Rights/Armenian%20Documents/UDHR_arm.pdf

լիք, հմտություններ և փորձ տալը, որոնք հետագայում կօգտագործվեն սովորողի կողմից հասարակության հետ շփման և համագործակցության մեջ: Սակայն Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը պետությունների համար պարտադրող և պարտավորեցնող փաստաթուղթ չի հանդիսանում: Չնայած այս հանգամանքին՝ հռչակագիրը հիմք է ծառայել մի շարք այլ փաստաթղթերի ստեղծման համար: Օրինակ՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը ևս սահմանում է կրթությունը որպես իրավունք: Հոդված 13-ն ասում է. «Սույն դաշնագրին մասնակցող պետությունները ճանաչում են կրթության՝ յուրաքանչյուր մարդու իրավունքը: Նրանք համաձայնում են, որ կրթությունը պետք է ուղղված լինի մարդկային անհատի և նրա արժանապատվության գիտակցման լիակատար զարգացմանը և պետք է ամրապնդի հարգանքը մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ: Մասնակցող պետություններն, այնուհետև, համաձայնում են այն բանին, որ կրթությունը պետք է բոլորին հնարավորություն ընձեռնի լինելու ազատ հասարակության օգտակար մասնակիցներ, նպաստի բոլոր ազգերի և բոլոր ռասաների, էթնիկ խմբերի միջև փոխըմբռնմանը, հանդուրժողականությանն ու բարեկամությանը և զորակցի խաղաղության պահպանման ուղղությամբ միավորված ազգերի կազմակերպության աշխատանքին»[6], ինչպես նաև Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, հոդված 29, 1 մասի բ և դ ենթակետերը.

բ. «մարդու իրավունքների և հիմնական ազատությունների, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության մեջ հռչակված սկզբունքների նկատմամբ հարգանքի դաստիարակմանը:

դ. ազատ հասարակության մեջ փոխըմբռնման, խաղաղության, հանդուրժողականության, տղամարդու և կնոջ իրավահավասարության և բոլոր ժողովուրդների, էթնիկական, ազգային և կրոնական խմբերի, ինչպես նաև բնիկ ազգաբնակչությանը պատկանող անձանց միջև բարեկամության ոգով գիտակցական կյանք վարելու համար երեխայի նախապատրաստմանը»[7]: Ի հավելումն սրան՝ «Սոցիալական, մշա-

[6]«Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միգազգային դաշնագիր», 1966, http://www.un.am/res/UN%20Treaties/III_3.pdf:

[7]Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա, 1989, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=60503:

կութային և տնտեսական հռչակագրի» ներդրմանն ուղղված ընդհանուր մեկնաբանությունը (N13) պնդում է. «Կրթությունը ինքնին իրավունք է և նաև այլ իրավունքները իրացնելու միջոց: Որպես ոգեշնչող իրավունք՝ կրթությունը առաջնային միջոց է, որով տնտեսապես և սոցիալապես մարգիանալացված մեծահասակներն ու երեխաները կարող են դուրս գալ աղքատությունից և ձեռք բերել միջոցներ ամբողջությամբ մասնակցելու իրենց համայնքի կյանքին: Կրթությունն ունի կանանց ոգեշնչելու մեծ դեր, երեխաներին պաշտպանելու աշխատանքային և սեռական շահագործումից, խթանելու մարդու իրավունքներն ու ժողովրդավարությունը, պաշտպանելու բնությունը ու վերահսկելու ժողովրդագրական աճը....»[8]: Այս փաստաթղթերում կրթությանը, բացի իրավունք դիտարկելուց, տրվում է որոշակի էություն, ուղղվածություն և բովանդակային հայեցակարգ: Կարևոր է նշել, որ բացի պետության վրա որոշակի պարտավորություններ դնելուց ու կրթությունը որպես իրավունք սահմանելուց, այս փաստաթղթերը նաև պետություններին տալիս են կրթության բովանդակային շրջանակ:

Միջազգային դաշնագրերից զատ Հայաստանի Հանրապետությունը պարտավորություններ ունի նաև տարածաշրջանային համագործակցության շրջանակներում՝ մասնավորապես հանդիսանալով Եվրոպայի խորհրդին անդամակցող երկիր: Օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ևս կրթությունը սահմանվում է որպես իրավունք, իսկ պետությունները պարտավորվում են հարգել յուրաքանչյուր ծնողի իրավունքը. երեխային տրամադրել այնպիսի կրթություն, որը հարմարավետ է նրանց կրոնի և փիլիսոփայության հետ[9]: Այնուամենայնիվ, այս փաստաթուղթը չի կարգավորում կրթության որակը և բովանդակությունը, որը սահմանվում է տարբեր իրավական փաստաթղթերով: Օրինակ «Ժողովրդավարության քաղաքացիական կրթության և մարդու իրավունքների կրթության մասին խարտիան» ասում է. ««Կրթությունը ժողովրդավարական քաղաքացիության համար» նշանակում է կրթություն, վերապատրաստում, իրազեկում, տեղեկատվություն, պրակտիկա և գործունեություն, որի նպատակն է սովորողներին տալ

---

[8]«Տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքների միջազգային դաշանգրի ընդհանուր մեկնաբանություն N13. Կրթության իրավունք», 1999, https://www.refworld.org/docid/4538838c22.html:

[9]«Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա», https://www.echr.coe.int/Documents/Convention_ENG.pdf:

գիտելիքներ, հմտություններ և հասկացողություն, զարգացնել նրանց վերաբերմունքն ու վարքագիծը, ոգևորել սովորողներին փորձարկել և պաշտպանել իրենց ժողովրդավարական իրավունքներն ու պարտականությունները հասարակության մեջ, գնահատել բազմազանությունը և մասնակցել ժողովրդավարական կյանքին օրենքի գերակայության և ժողովրդավարության խթանման ու պաշտպանության նպատակով»[10]: Նրանում նաև նշված է, որ ժողովրդավար քաղաքացիական կրթության նպատակը պիտի լինի ոչ միայն սովորողներին գիտելիքով, հմտություններով և հասկացողությամբ զինելը, այլ վերջիններիս ոգևորելը, որպեսզի ապագայում կարողանան քայլեր ձեռնարկել և ակտիվորեն մասնակցել հասարակության մեջ մարդու իրավունքների և ակտիվության խթանման և պաշտպանության գործին: Նույն փաստաթղթում տրվում է նաև մարդու իրավունքների կրթության սահմանումը, համաձայն որի՝ «կրթություն, վերապատրաստում, իրազեկության բարձրացում, տեղեկատվություն, փորձ եւ գործունեություն է, որը նպատակ է հետապնդում սովորողներին ապահովել գիտելիքներով, հմտություններով եւ գաղափարներով, զարգացնել նրանց վերաբերմունքը եւ վարքը, նպաստել համընդհանուր մշակույթի ձեւավորմանը եւ պաշտպանությանը՝ խթանելով և պաշտպանելով մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները»[11]: Վերոնշյալ կրթական երկու ծրագրերը իրար հետ փոխկապակցված են և նրանց նպատակը ի սկզբանե նույնն է, այն տարբերությամբ՝ եթե քաղաքացիական կրթությունը տալիս է անհատին քաղաքացու համար նախատեսված առօրեական գիտելիք, ապա մարդու իրավունքների կրթությունը ծածկում է ավելի լայն դաշտ՝ անդրադառնալով համընդհանուր իրավունքներին և հիմնարար ազատություններին: Չնայած որ երկուսն էլ կրթում են անհատին՝ հղում կատարելով իրավունքներին և լինելով իրավունքի կրողը, անդրադառնալով կյանքի բոլոր շրջաններին:

Բացի դաշնագրերից և նրանց առնչվող լրացումներից, գոյություն ունեն նաև մի շարք միջազգային փաստաթղթեր և շրջանակներ, որոնք հայեցողական դիրքում են պետությունների նկատմամբ և վերջիններս որոշում են՝ որի ընթացքին կհետևեն

---

[10] «Ժողովրդավարությանքաղաքացիականկրթությանևմարդուիրավունքներիկրթությանմասինխարտիա», 2010, https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805cf01f:

[11] *Նույն տեղում:*

և կներդնեն պետական քաղաքականության մեջ: Ներկայումս Հայաստանը սատարում է ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին՝ փորձելով մինչև 2030թ.-ը հասնել այս նպատակների՝ եթե ոչ ամբողջական, ապա մասնակի կատարմանը: Կայուն զարգացման նպատակներից 4-րդի թիրախում մինչև 2030թ.-ը բոլորի համար ներառական և համապատասխան որակյալ կրթություն ապահովելն ու ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորությունները խթանելն է[12], իսկ 4.7-ը սահմանում է. «Մինչև 2030 թ. ապահովել, որ բոլոր սովորողները ձեռք բերեն կայուն զարգացումը խթանելու համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, այդ թվում, ի թիվս այլոց, կայուն զարգացման և կայուն կենսակերպի, մարդու իրավունքների, գենդերային հավասարության, խաղաղության և բռնությունը մերժող մշակույթի խթանման, աշխարհի քաղաքացիության, ինչպես նաև մշակութային բազմազանության և կայուն զարգացման մեջ մշակույթի ունեցած ավանդը գնահատող ուսուցմամբ»[13], սակայն հետազոտություններում ու կրթական քաղաքականության մեջ դեռևս միայն խոսվում է ակտիվ քաղաքացիության բաղադրիչի մասին՝ նշելով, դասագրքերի և չափորոշիչների վերանայման ապագա քայլերի պլանավորումը:

Հետ վերադառնալով պետության պարտավորություններին՝ պետք է նշել, որ միջազգային բոլոր իրավական փաստաթղթերը ստանում են պարտավորեցնող բնույթ, երբ վավերացվում են պետությունների կողմից: Հայաստանի Հանրապետությունը, 1993թ.-ից սկսած, ստորագրել և վավերացրել է մի շարք միջազգային իրավական փաստաթղթեր՝ «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր» (1993), «Երեխաների իրավունքների դաշնագիր» (1993), «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին դաշնագիր» (1993), «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա» (2010) և այլն: Այս պարտավորությունների մի մասը արդեն իսկ ստացել է իր օրենսդրական արտացոլումը ՀՀ Սահմանադրության և տեղական օրենսդրության մեջ: ՀՀ Սահմանադրությամբ կրթությունը սահմանվում է որպես իրավունք. «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք...»[14], սակայն

---

[12]Կայուն զարգման նպատակ 4, 2016,http://un.am/hy/p/sustainable-development-goal-4:

[13]*Նույն տեղում:*

[14]Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 2015, http://www.president.am/hy/constitution-2015/:

չի առանձնացվում կրթության էությունը: Կարևոր է նշել՝ այս հոդվածը չի ամրագրում կրթության որակի բաղադրիչը, որը միջազգային փաստաթղթերում սկսել է ամրագրվել դեռևս 2000-ականների սկզբին (իրավիճակն անփոփոխ է մնում նաև 2015թ.-ի սահմանադրական բարեփոխումներից հետո): Իսկ ահա օրենսդրական մակարդակում կրթության բովանդակության մասին խոսելիս Հանրակրթության մասին օրենքի 5-րդ հոդվածի 1 մասը գրեթե նույնությամբ արտացոլում է «Սոցիալ- տնտեսական և մշակութային» դաշնագրի 13-րդ հոդվածը. «Կրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը. հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը...»[15]: Հատկանշական է, որ այս կետում տեղ են գտել արտահայտություններ, ինչպիսիք են «ազգային արժեքները» ու «հայրենասիրությունը», որոնք ենթադրաբար փորձում են բովանդակային համապատասխանեցում տալ տեղական արժեհամակարգին: Սակայն պետք է նշել, որ վերո նշյալ տերմինները, երբեմն սխալ կիրառություն ու տարածում են ունենում ոչ միայն կրթական միջավայրում, այլ նաև իրավական հարթակում, որի պատճառով հակասություններ են առաջանում երկրի ստանձնած պարտավորությունների և ամրագրված տեղական օրենսդրական փաստաթղթերի միջև:

Իրավական փաստաթղթերի բովանդակությունը քննելիս կարելի է նկատել, որ վերջիններս, բացի կրթության իրավունքը սահմանելուց, յուրաքանչյուր պետությանը տալիս են կրթության էության և բովանդակության հստակ տեսլական, որով առանջնորդվելիս և ներքին օրենսդրական փաստաթղթերն ու քաղաքականությունը մշակելիս պետությունները հստակ քայլերով առաջ կգնան՝ կերտելով կրթական պրոցեսի յուրաքանչյուր մասնակցի արժեհամակարգն ու աշխարհընկալումը:

[15] ՀՀ Կրթության մասին օրենք, 2009, https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908:

«Հասարակագիտություն» և քաղաքացիական կրթություն

Հատկանշական է, որ յուրաքանչյուր երկիր ինքն է որոշում, թե ինչ փիլիսոփայություն և էություն է դնում կրթության հիմքում, և, եթե իշխանությունը որոշում է գնալ ժողովրդավարացման ուղով, ապա նա ընտրում է ժողովրդավարական արժեքները որպես ուղենիշ, եթե բռնապետություն, ապա փորձում է տարբեր մանիպուլացիոն գաղափարների միջոցով խեղաթյուրել կրթության ոլորտը և իր կողմից տրամադրող կրթությունը: Նույնիսկ ֆինանսական տեսնակյունից, եթե պետությունը բավականաչափ գումար է ներդնում կրթության մեջ, ապա, ի վերջո, այն ունենում է քաղաքացիներ, ովքեր պատրաստ են լինում հարկեր վճարել, և որն էլ դառնում է տարբեր ոլորտներում զարգացման գրավական: Հարկ է նշել, որ աշակերտներին ոչ թե հարկատու են դարձնում, այլ սովորեցնում են պետության կառուցվածքը, որի մի անբաժանելի մասը հենց ինքը՝ քաղաքացին է:

Արժեքային այնպիսի համակարգերը, ինչպիսին եք մարդու իրավունքներն ու ազատությունները, արժանապատվության սահմանումը, պատասխանատվությունն ու հանդուրժողականությունը, քաղաքացիական գիտակցությունը և հասարակական կյանքում ակտիվ ներգավվածությունը, տարրեր են, որոնք ոչ միայն ամրագրված են վերոնշյալ միջազգային, տարածաշրջանային ու տեղական իրավական փաստաթղթերում, այլ նաև հանդիսանում են կրթության փիլիսոփայության և քաղաքականության մշակման հիմքը: Սրանք արժեքներ են, որոնք ԿԳՆ-ի կողմից սահմանված առարկայացանկերում առկա յուրաքանչյուր առարկա պետք է խթանի և ջատագովը լինի դրանց տարածման ու կիրառման համար: Ներկայումս միակ առարկան, որը կարողանում է լրացնել այս բացը, «Հասարակագիտությունն» է: Մինչ առարկայի՝ որպես հանրակրթության բաղադրիչ դառնալը, այն անցել է որոշակի պատմություն՝ սկսած ուսումնաօժանդակ փոքրիկ ձեռնարկներից, աշխատանքային տետրերից և արտադասարանական խմբակից, մինչև առանձին բուն «Հասարակագիտություն» առարկա: Այս առարկայի պատմությունը գնում է դեպի ԽՍՀՄ փլուզում և ՀՀ-ի անկախացում՝ 90-ականներ, երբ մի շարք միջազգային ներկայացուցչությունների օժանդակությամբ ներդրվեցին ձեռնարկներ, ինչպիսիք էին «Բա՛րև, ես եմ», «Երեխան հանդիպում է երեխային» և այլն: 2001-2002թթ., երբ հանրակրթությունը տասնամյա էր, 8-րդ դասարանում ներդրվեց «Մարդու իրավունքների կրթություն»,

9-րդ դասարանում՝ «Քաղաքացիական կրթություն», իսկ 10-րդ դասարանում՝ «Պետություն և օրենք» առարկաները: 2006թ.-ին միջնակարգ կրթության բարեփոխումներից և 12-ամյա կրթության անցումից հետո համանման առարկա՝ «Հասարակագիտություն», ներդրվեց նաև 10-12-րդ դասարաններում՝ իր մեջ ընդգրկելով ուսումնական պլան, դասագրքեր, ուսումնաօժանդակ նյութեր: 2008թ.-ին «Սիվիտաս» ՀԿ-ի կողմից ներդրվեց համայնքահեն քաղաքացիական կրթության «Քաղաքացի նախագիծ» ծրագիրը, որը հետագայում ներառվեց «Հասարակագիտություն» առարկայի ծրագրում: Ի հավելումն սրան՝ ավելի ցածր դասարաններում՝ մասնավորապես 2-4-րդ, ներդրվեց «Ես և շրջակա աշխարհը»՝ դասավանդելով նաև հատվածներ Ժողովրդավարության զարգացման կրթությունից (Եվրոպայի խորհրդի կողմից մշակված)[16]:

Այս հետազոտության առարկան 10-12-րդ դասարաններում «Հասարակագիտություն» առարկայի ուսումնական պրոցեսն է: «Հասարակագիտությունը» բաժանված է 7 բաժիններիի՝ գեղագիտություն, բարոյագիտություն, հոգեբանություն, տնտեսագիտություն, իրավագիտություն, քաղաքագիտություն և փիլիսոփայություն: Առարկայական չափորոշչի՝ «Հասարակագիտության կրթական ներուժ» բաժնում շեշտվում է, որ ժամանակակից աշխարհում կրթության հումանիզացման կարիք կա, քանի որ նեղ մասնագիտական կրթությունը գերիշխում է, և գոյանում են մանսագիտական հանրություններ, որոնք հումանիտար հիմքից զուրկ են[17]: Ավելին, ընդգծվում է՝ ՀՀ ժողովրդավարացման ճանապարհին կարևորվում է առարկայի դերը, և գործոնների մեջ նշվում է, որ առարկան ապագա քաղաքացուն տալու է հմտություն, գիտելիք և արժեքային համակարգ, որը օգնելու է նրան առօրեական տարբեր խնդիրների բախվելիս: Գործոնների մեջ նշված է. «Վաղուց արդեն գիտակցված իրողություն է, որ ժողովրդավարական հաստատությունների կառուցվածքն ու օրենքները կարող են լինել շատ լավը, սակայն, եթե մարդիկ չունեն կամ չեն ստեղծում «ժողովրդավարական սովորույթներ», ժողովրդավարությունը մնում է լոկ գաղափար: Այդ առումով շատ մեծ է «Հասարակագիտության» դասավանդ

[16]Ձեկույց Արևելյան Գործընկերության 6 երկների ժովովրդավարության քաղաքացիության և մարդու իրավունքների կրթության քաղաքականության և փորձառության մասին, 2016, https://rm.coe.int/1680703cf8:

[17]«Հասարակագիտություն, Հանրակրթության ավագ դպրոցի չափորոշիչներ և ծրագրեր», էջ 5, 2009թվ.:

ման նշանակությունը.... Որն իրականություն կդարձնի ժողովրդավարությունը»[18]: Չափորոշչում ինքնին ընդունվում է, որ որոշակի առարկաներ միայն հընթացս են նպաստում անձի ձևավորմանը, իսկ «Հասարակագիտությունը» ինքնին ստեղծված է անձի կերտման և ինքնակերտման համար: Այս առարկայի առավել կարևոր գործոններից մեկը ժողովրդավարական հասարակության քաղաքացու ձևավորման, ժողովրդավարության հիմնարար արժեքների յուրացման և քաղաքացիական հասրակության ձևավորման նպաստելն է մարդու իրավունքների, քաղաքացիական կրթության, իրավագիտակցության բաղադրիչների միջոցով: Սա էլ իր հերթին կնպաստի գենդերային գիտելիքների՝ կնոջ և տղամարդու իրավահավասարության կարծրատիպերի հաղթահարմանը, և նրանց՝ հասարակության մեջ ակտիվության դրական ընկալմանը[19]: Սրանք հետազոտության առաջին մասում նշված միջազգային, տարածաշրջանային և տեղական իրավական փաստաթղթերի և հայեցակարգի արտացոլումն են հենց բուն առարկայական չափորոշչի մեջ: Փաստաթղթի ժողովրդավարական արժեհամակարգը ընդգծելն ու կրթության՝ քաղաքացի կերտելու նպատակը մի քանի անգամ նշելը առաջին հայացքից ապացուցում են, որ առարկան միտված է ակտիվ ու գիտակից քաղաքացի կրթելուն:

Այս գաղափարախոսությունները, արժեքներն ու փիլիսոփայությունը չեն կարող միջին կամ ավագ դպրոցում միանգամից մուտք գործել որպես որևէ առարկայի վերջնարդյունք, բայց լավագույնը կլինի այն, որ հնարավոր է արժեքային համակարգ ստեղծել, որը, հատուկ առանձնացված դասարաններին դասավանդելու փոխարեն, հանրակրթության անձրևանոցն ու փիլիսոփայությունը կլինի՝ սկսելով 1-ին դասարանից և շարունակելով ամբողջ կյանքում:

Բերենք Լատինական Ամերիկայի երկրների օրինակը, որ դեռևս 90-ական թվականներին (16 երկրներից շուրջ 12-ում) արժեքներ ու դրանց տարածումը, ինչպիսիք են պատասխանատվություն, էթիկան և սոցիալական ու քաղաքական գիտակցությունը, սահմանվեցին որպես կրթության հիմնական նպատակներ: Այս 12 երկրներից երկուսը՝ Կուբան և Նիկարագուան, սկսեցին խթանել մասնակցությունն ու ներգրավվածությունը՝ որպես քաղաքական գիտակցության զարգացման գործիք:

---

[18]Նույն տեղում, էջ 6:

[19]«Հասարակագիտություն, Հանրակրթության ավագ դպրոցի չափորոշիչներ և ծրագրեր», էջ 7, 2009թվ.:

Սակայն մնացածն ինչ-ինչ պատճառներով կաղացին՝ նշելով այն որպես դեմոկրատական գիտակցության զարգացում: Սա ազդակ էր, որ այս հասարակություններում կրթությունը չէին փորձում կապել քաղաքականության հետ, այնինչ բրազիլացի հայտնի մանկավարժ Պաուլո Ֆրեյրեն ասում էր, որ պետք է զարգացնել քննադատական գիտակցությունն ու մտածողությունը, որը թույլ կտա քաղաքացիներին հասկանալ, թե որքան կարևոր է նրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը ժողովրդավարական գործընթացներով առաջնորդվող հասարակություն և կառավարություն ունենալու համար: Այս ամենին հետևելու համար անհրաժեշտ է՝ կրթական շղթայի յուրաքանչյուր օղակ գիտակցի, թե յուրաքանչյուր գաղափար ինչու և ինչ մեթոդով է դասավանդու[20]մ: Սակայն ՀՀ-ում տարիներ շարունակ քաղաքացիական ակտիվությունը խթանելու պետական կրթական համակարգում միակ օղակը՝ «Հասարակագիտություն» առարկան շատ հանրակրթական դպրոցներում չի դասավանդվել արժեհամակարգը կրողը ուսուցիչների կողմից: Հարկավոր է նաև նշել, որ ոչ միայն 90-ականներին, այլ նաև մեր օրերում զարգացող երկրների մի մասում կրթությունն այնքան կենտրոնամետ է, որ ուսուցիչները չունեն որևէ ազատ անկյուն նոր կրթական մեթոդներ մտցնելու համար: Այս մասին է վկայում նաև ուսուցիչների հետ արված ֆոկուս-խումբ քննարկման ժամանակ չափորոշիչների մասին հնչեցված միտքը.

Այստեղ ոչ մեկը իր դասի պլանը գրելիս առաջինը չափորոշչին չի նայում, նայում է դասարանին ու անում....
Հասարակագիտություն առարկայի ուսուցչուհի

Պետք է նշել, որ ուսուցիչները նշում էին, որ չափորոշիչները ունեն բեռնաթափման կարիք, ինչպես նաև շատ դեպքերում նրանք գրքերի հետ համադրելի չեն, ոչ կիրառելի և բարդ են: Անհամապատասխանության մասին է խոսում նաև հետազոտողների կողմից կատարված գրքերի և չափորոշիրների թեմատիկ համապատասխանության համեմատությունը, որի արդյունքում պարզ է դարձել՝ չափորոշիչներում կան թեմաներ, որոնք չկան դասագրքերում և հակառակը: Օրինակ՝ 10-րդ դասարանի չափորոշչի «Բարոյագիտության» բաժնում Ա մակար-

[20]Էլեոնորա Վիլեգաս-Ռեյմերս, «Կրթություն ժողովրդավարության համար: Դպրոցների դերը», էջ 13-17, 1994:

դակի համար պահանջվում է թվարկել համամարդկային արժեքներ, բայց գրքի համապատասխան բաժնում որևէ տեղ չեն նշվում, թե որոնք են այդ համամարդկային արժեքները: Խոսելով միայն չարի և բարու մասին՝ աշակերտը չի կարող ինքն իրենով հասնել համամարդկային արժեքների գաղափարին: Մեկ այլ օրինակ՝ 11-րդ դասարանի չափորոշչի «Հայաստանի դատական իշխանությունը» բաժնում Բ մակարդակում նախատեսվում է գնահատել վարչական դատարանի դերը, սակայն գրքում եղած հարցերը, ինչպես նաև նյութը սովորողին տանում են այլ ճանապարհով, մասնավորապես. «Ինչ է վարչական դատարանը, և ինչ գործեր է այն քննում, կամ ինչ կազմով է վարչական դատարանը քննում վարչական գործերը»[21]: Ֆոկուս խմբին մասնակցած ուսուցիչները հավելում էին, որ չափորոշիչները հնարավորություն չեն ստեղծում փորձարարական մեթոդների կիրառման համար.

Չափորոշիչները կարգավորում են ամեն անկյունը, չնայած կարող էին ուղղակի ավելի թեթև լինել ու մեզնից վերջնարդյունք ուզել...
Հասարակագիտություն առարկայի ուսուցչուհի

Փաստացիորեն շատ քիչ տեղ է հատկացվում ստեղծագործելուն, իսկ ժողովրդավարական կրթության հաջողության գրավականը ոչ թե կրթական գործընթացի ամենաներգործվող մասնակիցներին գիտելիքի տակառ համարելն է, այլ նրանց գործընթացներին մասնակից դարձնելն է: Այս տեսանկյունից Ջին Պիգեթը ուշադրություն է դարձրել նաև 6-12 և 13-18 տարեկան երեխաների զարգացման շղթաներին՝ հասկանալու համար, թե տարբեր տարիքային խմբերի երեխաներին ինչ տեսակի գիտելիք, հմտություն և կարողություն/կոմպետենցիա/ է պետք (*իհարկե աղյուսակը միանշանակ չէ, բայց չափորոշչահեն կրթության համար կարող է օգտակար լինել*): Այս աղյուսակը կազմելիս հաշվի է առնվել նաև երեխայի զարգացման կոգնիտիվ, սոցիալ և էթնիկ բնորոշիչները (նշենք նաև, որ աղյուսակը ներառում է նախադրպոցական կրթությունը ևս, բայց հետազոտության առարկային հետևելով, վերցվել է 6-12 և 13-18 տարիքային խմբերի պատկերը).

---

[21] Ղազինյան Գ., Վաղարշյան Ա., Գյուլբուդաղյան Ա., «Հասարակագիտություն 11», էջ 47, 2015, http://online.fliphtml5.com/fumf/jrlc/#p=146:

Աղյուսակ 1 [22].

	Կոգնիտիվ	Սոցիալական	Էթիկական
Տարրական և միջին դպրոց	• Հստակ • Ոչ եսակենտրոն (պատրաստ իրենց տեսնել այլոց «կոշիկներում») • Կարող օգտագործել անցումային պատճառաբանություն (պատրաստ տեսնել պորցեսը՝ որպես ամբողջություն) • Ապակենտրոն • Բանական • Ավելի զարգացած մոտեցում հասկանալու բարդ իրավիճակները • Պատրաստ հասկանալու մեկից ավելի տեսակետներ	• Խմբային աշխատանքներ • Խմբային աշխատանքը՝ որպես աշխատելու հիմնական ձև • Հասարակական մտահորիզոն • Հասկանալ սեփական դերը հասարակության մեջ • Անձի/անհատի ձևավորում	• Այլոց կարծիքը հաշվի առնող • Համագործակցող • Ընդհանուր որոշումների համար պատրաստ ընդունել և հասկանալ այլոց կանոնները • Ոչ այնքան ավտոնոմ • Արագ կազմված խմբերի հետ աշխատանքից անցում հասարակության՝ որպես խմբի, ուսումնասիրում • Ավտոնոմիա (heteronomous), (դեռևս որոշումների կայացման մեջ այլոց կարծիքը հաշվի առնող) • Այլոց ճանաչումից կախված
Միջին դպրոց (բարձր դասարաններ), ավագ դպրոց	• Աբստրակտ • Տրամաբանված • Եսակենտրոն (երբ սկսում են ընդունել, որ իրենց կարծիքը յուրահատուկ է և գուցե միակ) • Պատրաստ ունենալ տարբեր կարծիքներ • Պատրաստ լուծել հիպոթետիկ խնդիրներ և մտածել հիպոթետիկ եղանակով		

[22]Էլեոնորա Վիլեգաս-Ռեյմերս, «Կրթություն ժողովրդավարության համար: Դպրոցների դերը», էջ 15, 1994:

Հաշվի առնելով գրքում տրված մեթոդները՝ պետք է նշել, որ դասապրոցեսի հիմնական տարբերությունը քաղաքացիական կրթության համար բարձր տարիքում երեխաների՝ դպրոցական կյանքին և որոշումների կայացմանը մասնակից դարձնելն է: Բացի այն, որ միջին դասարաններում նա սովորում է, թե ինչ է լինել հասարակության մի մաս, տարբեր մեթոդաբանական գործիքների՝ բանավեճ, սիմուլացիոն խաղեր, բարձր դասարաններում (ավագ դպրոց) աշակերտները պետք է կարողանան մասնակցել ժողովրդավարական պրոցեսներին: Ավելին՝ հենց այս տարիքում յուրաքանչյուր աշակերտ պետք է ունենա հնարավորություն վերլուծել և քննադատորեն մոտենալ համայնքում, երկրում և աշխարհում կատարվող իրադարձություններին:

Հետաքրքրական է, որ Գավառում աշակերտների հետ ֆոկուս խումբ քննակրման ժամանակ մի հարցադրման արդյունքում (*ինչպես ինքներդ կիրականացնեինք դասապրոցեսը*)[23] աշակերտների մեծ մասը նշում էր, որ կանցկացնեին դասը այս կամ այն ուսուցչի պես՝ փաստելով, որ նրանք դա իրականացնում են դասական կամ ստանդարտ ձևով: Դասական ասելով աշակերտները հասկանում էին ուսուցչի մուտքը դասարան և հարցումը նախորդ դասի մասին, հետո նոր դասի ընթերցում և անցում առաջ: Իսկ աշակերտներից մեկն ասել է հետևյալը.

Ես, ինչպես որ բոլոր ուսուցիչները, դասը բոլորի նման կբացարտեի, ոնց նորմալ դասն են բացատրում...
Նորմալ էլի՝ դասը կարդալ-պատմելով...
10-րդ դասարանի աշակերտ

Մեթոդների կիրառումն ու սեփական հետաքրքրությունը մեթոդի նկատմամբ հակասական էին, քանի որ աշակերտներից շատերը նշում էին, որ վերոնշված «դասական» մոտեցումները հետաքրքիր չեն իրենց համար: Կարելի է ենթադրել, որ նրանք ցիտում են իրենց տեսած և իրենց վրա կիրառված մեթոդները, քանի որ այլ մեթոդների ծանոթ չէին:

Պետք է փաստել՝ եթե կան դեպքեր, որ ուսուցիչները նույնն են լինում բոլոր դասարանների համար, փաստորեն դասապրոցեսը հինգ տարի շարունակ անցկացվում է նույն կերպ՝ առանց էական փոփոխության:

---

[23] Ներդիր 2, հարց 3, էջ 31:

Քննարկումների և հարցադրումների արդյունքում ստացվեց կիրառելի մեթոդների այսպիսի աղյուսակ.

Աղյուսակ 2.

Դերային խաղեր	**Խմբային աշխատանքները**	Տեսահոլովակների ցուցադրություն	**Հոգեբանական թեստեր**
Բաց դասեր	Սահիկահանդեսներ՝ սլայդեր	**Խաղեր, վիկտորինաներ**	**Բանավեճեր**
Շարադրություններ	Ոչ հոգեբանական թեստեր	Դիագրամներ, սանդղակներ	Հարցազրույցներ

Աշակերտները ավելի թավ տառերով առանձնացված մեթոդները նշել են ավելի շատ, և դա վկայում է մի կողմից՝ դրանց անհրաժեշտության, իսկ մյուս կողմից՝ մատչելիության մասին: Հատկանշական է, որ 10-րդ դասարանցիների կողմից դասագրքերում հոգեբանական թեստերի ավելացումը կարող է լինել հoգուտ իրենց: Սակայն մյուս կողմից էլ ուսուցիչները նշում էին, որ իրենց ձեռքի տակ եղած ռեսուրսները բավարար չեն. օրինակ՝ մի քանիսն իրենք առանձնացրին հոգեբանական թեստերի պակասը՝ պնդելով, որ երեխաների շրջանում այս թեստերը մեծ սեր սեր են վայելում, իսկ ուսուցիչներից մեկն էլ նշեց.

Այս առարկայից առաջ կար «Մարդու իրավունքներ» առարկան: Առարկայի հետ մեզ մեթոդական շատ լավ ձեռնարկ էին տվել, մինչև հիմա ես դա օգտագործում եմ: Ինձ օգնող ձեռարկ է պետք...

«Հասարակագիտություն» առարկայի ուսուցչուհի

Դասագրքերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ անգամ դասագրքերը հանձնարարությունների բազմազանությամբ աչքի չեն ընկնում. յուրաքանչյուր դասի վերջում տեղադրված է 5-10 հարց, որոնց մի մասն ունի ինֆորմացիան անգիր իմանալ կամ չիմանալու բնույթ, իսկ գործնական առաջադրանքների չափաբաժնի պակասը երևում է առաջին իսկ հայացքից: Օրինակ՝ 11-րդ դասարանի դասագրքում «իրավաբանության» բաժնում գոյություն ունի դատական պրոցեսի բեմադրման հետ կապված դերախաղը, որը երեխաների պատասխաններից պարզ էր՝ կամ չէր կատարվում ընդհանրա-

պես, կամ կատարվում էր մասնակիորեն, քանի որ դասաժամերը քիչ են: Գործնական աշխատանքների մի մասն էլ նվիրված է այս կամ այն աղբյուրից հավելյալ տեղեկատվություն գտնելուն կամ ռեֆերատներ գրելուն:

Խմբային աշխատանքների ժամանակ նույնիսկ չսովորած երեխան որոշակի տեղեկություններ կարողանում է սրանալ...
12-րդ դասարանի աշակերտ

Վիկտորինաները, որոնք նախընտրելի ու շատ կիրառելի են, դպրոցականների մեջ արթնացնում են մրցակցություն և տարբեր տրամաբանական հարցերի միջոցով արթնացնում են նրանց հետաքրքրությունը: Խմբային աշխատանքներն էլ, ըստ աշակերտների, օգնում են, որ նյութն ավելի արագ մարսվի: Երբ քննարկվում էր խմբային աշխատանքները, նրանք՝ որպես դրական կողմ, ընդգծում էին բոլորի ներգրավվածությունը.

Աշակերտները պնդում էին նաև, որ խմբային աշխատանքների ժամանակ[24].

- Տրված կամ ուսումնասիրվող նյութը մնում է նրանց հիշողության մեջ: Սա էլ իր հերթին թույլ է տալիս հետո այն փոխանցել այլոց:
- Ավելի «թույլ» աշակերտները օգնություն են ստանում «ուժեղների» կողմից և համընդհանուր դասի մարսում է լինում:
- Խմբային աշխատանքները շահագրգռում են լավ ներկայացնել խումբը, որպեսզի ավելի բարձր գնահատական բերեն խմբին: Դա ավելի է ոգևորում մասնակիցներին, որպեսզի հետաքրքիր ու լավ ներկայացնեն նյութն ու կատարեն հանձնարարությունը:
- Դասարանում ձևավորվում է բազմակարծություն, քանի որ քննարկումները առաջ են բերում տարբեր կարծիքներ:

Իսկ բազմակարծությունը սերտորեն կապված է ժողովրդավարական արժեքների հետ և հենց այս հետազոտության առարկաներից մեկն է: Հետևաբար, կարող ենք պնդել, որ

[24]Մեջբերում ՖԽ քննարկումներից:

խմբային աշխատանքները նպաստում են բազմակարծության տարածմանը՝ ցույց տալով դասի թեմա-մեթոդ-արժեք-գործընթաց կապը:

Իհարկե, պետք է փաստել, որ որոշակի հանգամանքներ և մեթոդների կիրառություններ կախված են ուսուցչի կամքից, ժամանակի տրամարդումից և ստեղծարար լինելուց: Չնայած որ աշակերտներից շատերը նշում էին, որ պատրաստ են ուսուցչին օգնել՝ ստեղծելու համար վիկտորինաներ և խաղեր, քանի որ ուզում են առարկան լինի աշակերտների համար ավելի գրավիչ և ուսուցումն ավելի արդյունավետ:

Առարկայական դասագրքերն ու նրանց նկատմամբ վերաբերմունքը

«Հասարակագիտություն» առարկայի դասագրքերը լույս են տեսել համապատասխանաբար 2009, 2015, 2011 թվականներին: Յուրաքանչյուր դասարանի համար նախատեսված է մեկ դասագիրք, որի կազմմանը մասնակցել են մեկից ավելի հեղինակներ, մեթոդաբաններ և դիզայներներ: Յուրաքանչյուր գրքում կան 3 բաժիններ, համապատասխանաբար՝

- 10-րդ դասարանում՝ գեղագիտություն, հոգեբանություն և տնտեսագիտություն (հեղինակներ՝ Պետրոսյան Ս., Խաչատրյան Ս., Խաչատրյան Հ., Վարդանյան Կ., Աղաջանյան Հ.):
- 11-րդ դասարանում՝ իրավագիտություն և քաղաքագիտություն (հեղինակներ՝ Ղազինյան Գ., Վաղարշյան Ա., Գյուլբուդաղյան Ա.,):
- 12-րդ դասարանում՝ փիլիսոփայություն (հեղինակներ՝ Պետրոսյան Ս., Խաչատրյան Ս.):

Դասագրքերում առկա առաջադրանքների հիմնական տեսակներն են հարցադրումներն ու գործնական աշխատանքները: Դասերի 80%-ին զուգահեռ գրքերում տեղադրված են նկարներ, սակայն դասագրքերի քննության առաջին փուլում պարզ դարձավ, որ այդ նկարների ու պատկերների 50-60% տոկոսը չուներ տեղեկատվական բնույթ: Հատկանշական է, որ որոշակի դասերի մեջ, ինչպես օրինակ՝ «Բազմակուսակցական համակարգը» թեմայում («Հասարակագիտություն 11») դասին ուղղորդող նկարում ՀՀ-ում գործող կուսակցություններից միայն «Հայաստանի հանրապետական կուսակցության» նկարն էր առկա դասագրքում:

Բովանդակային քննության արդյունքում, հիմք ընդունելով Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարության քաղաքացիական կրթության և մարդու իրավունքների կրթության մասին խարտիա»-ն ու ՀՀ պարտավորությունն այդ փաստաթղթի նկատմամբ, վերցվել են չորս բաղադրիչներ (1. **Ժողովրդավարություն** և **իրավունք**, 2. **հասարակական պատասխանատվություն**, 3. **բազմազանության տարածում**, 4. **հասարակական ակտիվ գործունեություն**, **մասնակցություն**) և դրանցով ուղղորդել ներդրված մեթոդը:

Հարկ է նշել, որ չափորոշիչ–դասագիրք համադրում կատարելիս որոշակի անհամապատասխաննություններ նկատվեցին դրանց միջև, մասնավորապես՝ չափորոշիչներում նշված արժեքները, ինչպես նաև գիտելիքը որոշակի տեղերում առկա չեն գրքում: Կան թեմաներ, որոնք առկա են չափորոշիչների մեջ, իսկ դասագրքերի նոր տարբերակներում չկան, ինչպես նաև դասագրքերում առկա հարցադրումների ծանր մասը նպաստում է միայն տեղեկատվությունն անգիր անելուն, այն դեպքում, երբ չափորոշիչները պահանջում են այլ վերջնարդյունք: Օրինակ՝ 11-րդ դասարանի համար նախատեսված «Ի՞նչ է ուսումնասիրում քաղաքագիտությունը» բաժնում Բ մակարդակի համար գրված է՝ «Գնահատի՛ր իշխանության ճյուղերի բնականոն հարաբերակցության նշանակությունը իրավական պետության մեջ», այնինչ դասագրքի նույն հատվածում հարցերը հետևյալն են. «Ի՞նչ է պետությունը, որո՞նք են պետական իշխանության հատկանիշները, ինչպիսի՞ն է ժողովրդի և պետության ինքնիշխանության հարաբերակցությունը»[25]: Դասի վերջում եղած այսպիսի հարցերին պատասխանելիս ոչ մի աշակերտ չի կարողանա խորանալ թեմայի մեջ և պատասխանել հարցին: Սրան նպաստում են մի քանի գործոններ՝ դասագրքի բարդությունը և բովանդակային տեսանկյունից միայն ինֆորմացիոն բնույթի լինելը (դասագիրքը տալիս է տեղեկություն, որի լիարժեք լինելը սակայն բարձրացվել է և՛ ուսուցիչների, և՛ աշակերտների կողմից), դասագրքերում առկա առաջադրանքների ո՛չ քննական, և ո՛չ էլ վերլուծական մտածողության խթանմանը նպաստելը և առարկային հատկացված ժամաքանակի քչությունը:

Հաշվի առնելով բովանդակային քննության արդյունքները՝ ֆոկուս-խմբերում (ուսուցիչներ և աշակերտներ) հարցեր տրվեցին նաև դասագրքերի բովանդակության և բարդության

[25]Ղազինյան Գ., Վաղարշյան Ա., Գյուլբուդաղյան Ա., «Հասարակագիտություն 11», էջ 152, 2015, http://online.fliphtml5.com/fumf/jrlc/#p=146:

վերաբերյալ: Ուսուցիչները փաստում են, որ հատկապես 11-րդ դասարանի դասագիրքը գրված է բավականին բարդ ակադեմիական լեզվով, և երբեմն նրանց համար ևս դժվար է լինում հասկանալ դասը: Արդյունքում նրանք օգտագործում են հավելյալ ռեսուրսներ՝ հերթական դասը յուրացնելու և աշակերտների համար ավելի մատչելի դարձնելու համար: Ի պատասխան մեր հարցին, թե արդյոք նրանք ունեն ուսուցչի համար նախատեսված ձեռնարկ, ուսուցիչներից մեկը պատասխանեց.

Ոչ, չունենք, բայց ներկայումս զգում ենք անհրաժեշտությունը: Հատկապես իրավագիտության և տնտեսագիտության բաժինների համար լավ կլիներ, որ հավելյալ տեղեկատվության աղբյուրներ ունենայինք, ինչպես նաև մեթոդաբանական օգնություն: Նախկինում «Իրավունք» առարկայի հետ կար շատ լավ ձեռնարկ, որը արժեքավոր օգնություն էր ուսուցչի համար: Ասեմ, որ մինչև օրս երբեմն օգտվում եմ այդ ձեռնարկից: «Հասարակագիտություն» առարկայի ուսուցիչ

Քննարկման ժամանակ ներկա էր նաև հատուկ դպրոցում աշխատող հասարակագիտության ուսուցիչը, ով նշեց, որ եթե ՀՀ-ն անցնում է ներառական կրթության, ապա պետք է հաշվի առնել, որ ուսուցչին ոչ միայն մեթոդաբանական օգնություն է պետք լինելու, այլ նաև նյութի ավելի պարզեցված տարբերակը, որը կօգնի նրան առանջնորդել դասը:

Ես նաև կցանկանայի, որ հոգեբանություն բաժինն ուսումնասիրելիս ինձ տրամադրվեր հավելյալ թեստերի ժողովածու կամ աղբյուր, որով կկարողանայի բավարարել աշակերտների հետաքրքրվածությունը հենց այս բաժնի նկատմամբ: «Հասարակագիտություն» առարկայի ուսուցիչ

Ուսուցիչները միաձայն նշում էին, որ դասագրքերը (մասնավորապես 11-րդ դասարանի դասագիրքը) բեռնաթափման կարիք ունեն: Քանի որ ՖԽ-ին ներկա առարկայական ուսուցիչները նշում էին նաև, որ դասագրքերի և իրականության միջև բաց կա, օրինակ՝ ՀՀ-ն այլևս նախագահական պետութ-

յուն չէ, սակայն դասագրքերը շարունակում են դա տարածել:

Դասագրքերում առկա տեքստային բարդության մասին մատնանշվել է նաև աշակերտների կողմից: Նրանց մեծ մասը խոսում էր հատկապես 11-րդ դասարանի դասագրքի մասին (ընդ որում, բարդություն ասելով աշակերտները նկատի էին ունենում լեզվական անհարթությունները, բառերի կրկնելը, նույն միտքը մի տեքստում տարբեր ձևակերպումներով տրամադրելը).

Կարդում ես, կարդում ես, կարդում...
Անհրաժեշտ եմ համարում հայերենից
թարգմանել հայերեն, որ գրածը հասկանամ:
11-րդ դասարանի աշակերտ

Հետևյալ մեջբերման մեջ պարզ երևում է որ աշակերտն ունի բարդության ընկալում դասագրքի հանդեպ, որը փաստում է նախ և առաջ գոյություն ունեցող լեզվական բարդության մասին: Մեկ այլ աշակերտ էլ նշում է.

Երբեմն դասերի շատության պատճառով երկու դաս
իրար հետ ենք անցնում, դրանից մեր
վիճակն ավելի է բարդանում:
12-րդ դասարանի աշակերտ

Աշակերտները նշում են, որ դասագրքերի բարդությունը հաղթահարելը ընկնում է ուսուցիչների վրա, և նրանք էլ իրենց հերթին նախընտրում են «բարդ» թեմաները կարդալ դասարանում, որն էլ իր հերթին խլում է դասաժամի մեծ մասը: Ավելին՝ աշակերտների համար դեռևս կային թեմաներ, որոնք մեկ ժամով անցնելիս մնացել էին անհասկանալի:

Չհասկանալու արդյունքում աշակերտների հետաքրքրվածությունը առարկայի նկատմամբ կորում է: Իսկ տնային առաջադրանքները կատարելու մասին հարցին աշակերտները վերաբերվում էին քմծիծաղով, ասելով, որ տնային առաջադրանքները կատարելիս նրանք «Հասարակագիտությունը» թողնում են վերջում: Աշակերտների մի մասն էլ նշում էր, որ դասին պատրաստվում են միայն դասարանում՝ դասի ընթացքում: Դասագրքերի բովանդակային ուսումնասիրությունը ցույց տվեց,

որ բաժինների և ընտրված թեմաներից շատերի մեջ հղումները բացակայում են և ստացվում է, որ հրամցված նյութը մնում է օդում կախված ու հետադարձ կապ չի ստեղծում աշակերտի հետ: Ավելին՝ անծանոթ տերմինների կիրառության դեպքում բացատրությունները կամ բացակայում, կամ էլ տեքստերի մեջ խցկված են, ինչն էլ աշակերտներին չի օգնում անծանոթ բառերն ու արտահայտությունները հասկանալ ու հիշել: Պարզ է դառնում նաև այն, որ որևէ դասագրքի վերջում օգտագործված գրականության ցանկն ու առաջարկվող հավելյալ գրականության ցանկը ընդհանուր առմամբ բացակայում են: Իրավիճակն ավելի խորը ուսումնասիրելիս երևում է, որ մեր այցելած դպրոցներում առարկան հիմնականում դասավանդվում է ուսումնական օրվա վերջին ժամերին, երբ նկատելի է դառնում աշակերտների հոգնածության աճը:

Աշակերտների շրջանում առարկայի կարևորությունը հասկանալու համար մշավել էր գնահատման աղյուսակ.

Աղյուսակ 3

Հայոց լ.	■						
Անգլերեն		■					
Հանրահաշիվ			■				
Ինֆորմատիկա				■			
Հասարակ.					■		
Ֆիզկուլտուրա						■	
Ֆիզիկա							■

Հետևյալ քանակական չափման միջոցով աշակերտները գնահատում էին 0 և 1 թվերով առաջնահերթ առարկան՝ համեմատելով մեկը մյուսի հետ:

Արդյունքում հասկանալի դարձավ, որ հասարակագիտություն առարկան 7 առարկաների շրջանում, ընդ որում առարկաները ընտրվել էին ըստ գոյություն ունեցող չափանիշների բաժանման, այսինքն հումանիտար, տեխնոլոգիական, ֆիզիկական դաստիարակության և այլ բաժիններով,

գտնվում է 5.7 միջակայքում: Սա ենթադրում է, որ ըստ առարկաների առաջնահերթության՝ այն գտնվում է միջինից ոչ առաջնահերթ տեղակայքում՝ մեծամասամբ առաջ անցնելով ֆիզկուլտուրա առարկայից: 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերում գտնվում էին համապատասխանաբար հայոց լեզու, մաթեմատիկա և անգլերեն առարկաները: Ունենալով հետևյալ քանակական չափումը՝ խոսակցություն ծավալվեց դրա պատճառների մասին:

Հասարակագիտությունն ինձ համար երկրորդ պլան է մղվել, որովհետև դպրոցում էլ շատ քիչ են այս առարկային հետևում: 12-րդ դասարանի աշակերտ

Հետաքրքրական է, որ «Հասարակագիտություն» առարկա դասավանդող ուսուցիչների մեծ մասը դասավանդում է նաև այլ առարկա:

Աշակերտները նախ և առաջ պնդում էին, որ հասարակագիտությունը, լինելով կարևոր առարկա, այնուամենայնիվ, բուհի ընդունելության քննությունների ժամանակ պետք չի գալիս, դեռ ավելին, չկա նաև դպրոցում ավարտական քննություն: Հետաքրքրական էր, որ շատերը նշում էին, որ ինֆորմատիկա առարկայի հանդեպ հետաքրքրությունը ավելացել է՝ հաշվի առնելով 21-րդ դարի տենդենցները տեղեկատվական տեխնոլոգիայի զարգացման և աշխատաշուկայում իրենց տեղը գտնելու առումով:

Եզրակացություն

Չնայած որ յուրաքանչյուր կրթական համակարգ անմիջականորեն արտացոլում և արտահայտում է պետության վարած քաղաքականությունն ու ունեցած փիլիսոփայությունը, այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում կանգնած է փոփոխությունների շեմին: Յուրաքանչյուր կայացրած որոշում, ձևակերպված օրենք և առաջարկված չափորոշիչ ազդելու է հազարավոր մարդկանց աշխարհայացքի ձևավորման գործընթացի վրա: Շատ կարևոր է, որ մինչև որոշակի գործընթացներ սկսելը՝ կրթության ոլորտի պատասխանատուները կարողանան սահմանել իրենց նպատակներն ու ակնկալվող վերջնարդյունքները, իսկ պրոցեսը կմշակվի կրթության հետ առնչվող յուրաքանչյուր շահառուի հետ՝ հաշվի առնելով խելամիտ ու կարիքից ելնող գործընթացները:

Այս հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ ներկայումս սեղանին դրված փաստաթղթերն ու դասագրքերը բավարար մասսայականություն չեն վայելում, ավելին՝ դրանց մի մասը ուղղակի մնում է ուսուցիչների դարակներում, իսկ դասագրքերի մի մասն էլ դժվարամարս ու բարձր ակադեմիական լեզվով են գրված: Հստակ է մի բան, եթե նպատակը ակտիվ և իրավագիտակից քաղաքացի ունենալն է, ապա գոնե այսօր այն միայն ուսուցիչների բարի կամքի արդյունքում է խթանվում, որը համատարած բնույթ չունի:

Հետազոտության արդյունքում, հայացք գցելով ծրագրերից ազդեցություն կրող կողմերի (ուսուցիչներ, աշակերտներ), ինչպես նաև ձեռքի տակ առկա բոլոր փաստաթղթերի վրա, արձանագրվում է.

1. Չափորոշիչների և առարկայական ծրագրերի վերանայման նախնական փուլում կատարել դաշտային աշխատանքներ ու կազմակերպել հանրային քննարկումներ «Հասարակագիտություն» առարկան դասավանդող ուսուցիչների հետ: Սա յուրաքանչյուր գալիք փաստաթղթին կտա որոշակի ուժ և կիրառության լայն շրջանակ:

2. Չափորոշիչները վերանայելիս առանձնակի ուշադրություն է պետք դարձնել նրա բովանդակային և գաղափարական հենքին: Կիրառությունն ավելի մեծ մասշտաբների հասցնելու համար կարելի է նրանում

սահմանել հստակ վերջնարդյունքներ և արժեհամակարգ՝ տալով փաստաթղթին անձրևանոցի տեսք և ուսուցչին տալ մեթոդաբանության և վերջնարդյունքին հասնելու հնարավորություն:

3. Չափորոշիչները կազմելիս մեծ ուշադրության է արժանի նրա և դասագրքերի հետ կապի պահպանումը: Հետազոտությունը ցույց տվեց, որ վերոնշվածների միջև կար անհամապատասխանություն, որն էլ բերում էր չափորոշիչների անկիրառելության և դասագրքերով առաջնորդվելուն:

4. Դասագրքերի բովանդակային մասը մշակելու գործընթացում, բացի նեղ ոլորտային ակադեմիկներից և դասախոսներից, ներառել նաև ուսուցիչների՝ տեքստերը և դրա միտքը աշակերտներին ավելի հասանելի դարձնելու համար:

5. Վերակազմել և ուշադրություն դարձել 9-րդ և 11-րդ դասարանի դասագրքերի տված տեղեկությանն ու գիտելիքին: Հետազոտության ընթացքում աշակերտները նշեցին, որ չնայած 9-րդ դասարանի դասագիրքը բավականին հետաքրքիր է գրված, և իրավունքներն ու ժողովրդավարությունը հիմնականում քննարկված են այնտեղ, բայց 11-րդ դասարանում դրանք արդեն չեն հիշվում, ու չոր մասնագիտական նյութերը դառնում են նրանց համար ոչ մատչելի:

   Առաջարկվում է վերանայել նշված դասագրքերը, որպեսզի արդյունքում կա՛մ միավորեն այս երկու գրքերում առկա նյութը, կա՛մ որոշակի թեմաներ տանեն 11-րդ դասարան: Մենք առաջարկում ենք «Մասնակցություն», «Ժողովրդավարություն» ու «Իրավունքներ» թեմաների կրկնությունը 11-րդ դասարանում:

6. Գրքերի վրա աշխատող մեթոդաբանների կողմից ուշադրության է արժանի գործնական վարժությունների պակասը: Վերլուծական և քննադատական միտքը զարգացնելու և մասնակցությունը խթանելու համար դասագիրքը կարիք ունի ընդգրկելու այնպիսի հարցադրումներ և առաջադրանքներ, որոնք

կրթությունը կբարձրացնեն այլ աստիճանի՝ ամեն անգամ դասական անգիր անելու մեթոդին դիմելու փոխարեն:

7. «Հասարակագիտության» դասագրքերում մեթոդաբանական փոփոխությունների և գործնական առաջադրանքների մեջ ընդգրկել նաև համայնքի համար պարտադիր կամավորություն անելու որոշակի ժամեր, որոնք կազդեն գնահատականի զարգացման վրա: Բացի տեսություն ուսումնասիրելուց, աշակերտները կունենան հնարավորություն մասնակցելու համայնքային կյանքին, որն էլ ապագայում առաջ կբերի շարունակական մասնակցությունը:

8. Մշակել ուսուցիչների համար նախատեսված վերապատրաստման ավելի խորը ու մասնագիտական դասընթաց, որի ընթացքում ուսուցիչներին կբացատրվի այն արժեհամակարգը, որը կդրվի «Հասարակագիտություն» առարկայի հիմքում: Հետագայում հետևել, որ որակավորում ստացած ուսուցիչները զբաղվեն «Հասարակագիտություն» առարկայի դասավանդմամբ, որպեսզի ուսումնական գործընթացը համապատասխանի ակնկալվող վերջնարդյունքի հետ:

Հավելված

Ներդիր 1

ՖԽ հարցարան ուսուցիչների համար

1. Արդյո՞ք հասարակագիտություն առարկան միակն է, որ դասավանդում եք դպրոցում: Ըստ Ձեզ՝ ինչպիսի՞ հմտություններ պետք է ունենա հասարակագիտության ուսուցչուհին/ուսուցիչը:

2. Այստեղ գտնվողներիս հայտնի է, որ գոյություն ունեն հանրակրթական պետական չափորոշիչներ, որոնց պետք է համապատասխանի դասագիրքը, և ուսուցչական անձնակազմը ևս դրանցով պետք է առաջնորդվի: Ի՞նչ կասեք դրա հետ կապված: Ըստ Ձեզ՝ համապատասխանու՞մ են հասարակագիտության դասագրքերը հետևյալ չափորոշիչներին՝

- Ժողովրդավարություն և իրավունք
- Հասարակական պատասխանատվություն
- Բազմազանության տարածում
- Հասարակական ակտիվ գործունեություն, մասնակցություն

3. Եկեք այժմ խոսենք հասարակագիտության դասագրքերի մասին: Խնդրում եմ նշել, թե 10,11, 12-րդ դասագրքերից ո՞րն է Ձեզ համար նախընտրելի և ինչու՞:

4. Ինչպիսի՞ փոփոխություններ կանեիք, և կա՞ն արդյոք թեմաներ, որոնք ըստ Ձեզ կարելի է չներառել (եթե կան, ապա փորձեք նշել՝ ինչու՞):

5. Իսկ ի՞նչ կասեք դասագրքում ներառված վարժությունների, գործնական առաջադրանքների մասին: Արդյո՞ք մնում է ժամանակ դրանք իրականացնելու համար:

6. Իսկ ի՞նչ կասեք աշակերտների՝ դասին ներկայանալու մասին, հատկապես 12-րդ դասարանում: Առհասարակ ինչպե՞ս են իրենց դրսևորում դասի ժամանակ:

7. Կարծիք կա, որ հասարակագիտություն առարկան այդքան էլ առաջնահերթ չէ, որքան, օրինակ օտար լեզուները կամ մաթեմատիկան, ի՞նչ կասեք դրա հետ կապված: Ինչպիսի՞ քայլեր կարելի է ձեռնարկել իրավիճակը բարելավելու համար:

Ներդիր 2

1.Երևի թե լսել եք կամ գիտեք, որ գոյություն ունեն որոշակի չափանիշներ, որոնց հիման վրա ստեղծվում/գրվում են դասագրքերը: Ըստ Ձեզ՝ հասարակագիտության դասագրքերում որքանո՞վ է խոսվում հետևյալ թեմաներից՝

- Ժողովրդավարություն և իրավունք
- Հասարակական պատասխանատվություն
- Բազմազանության տարածում
- Հասարակական ակտիվ գործունեություն, մասնակցություն

2. Իսկ ի՞նչ կասեք դրանց բարդության մասին: Արդյո՞ք պարզ, հասկանալի լեզվով է տրամադրված նյութը: (Կարդացե՞լ եք դասագրքից բացի այլ նյութ տնային առաջադրանքը իրականացնելու համար):

3. Պատկերացրեք, դուք հասարակագիտության ուսուցիչ եք, ինչպե՞ս կներկայացնեք, օրինակ՝ քաղաքացիական մասնակցություն թեման 1 դասաժամի ընթացքում: (Փորձեք հիշել, թե ինչպես է այն իրականացրել ձեր հասարակագիտության ուսուցչուհին):

4. Երբևէ՞ իրականացրել եք խմբային աշխատանքներ դասի ժամանակ. արդյո՞ք տեղեկատվությունը ավելի հեշտ եք յուրացնում այդպես: Ինչու՞:

5. Ի՞նչ լրացուցիչ մեթոդներ կառաջարկեք դասն ավելի հետաքրքիր և ինտերակտիվ անցկացնելու համար:

6. Շատ է խոսվում, որ «Հասարակագիտություն» առարկայի հանդեպ աշակերտների կողմից չկա հետաքրքրվածություն: Ինչպիսի՞ն է ձեր կարծիքը այս հարցի շուրջ, (պարզեցում. օր.՝ ինչքա՞ն ժամանակ եք տրամադրում տանը տնային առաջադրանքները իրականացնելու համար):

7. Իսկ ի՞նչ կասեիք, եթե հասարակագիտություն առարկան դառնա ընդունելության պարտադիր քննություն որոշ մասնագիտությունների համար (օր.՝ հոգեբանություն, սոցիոլոգիա, իրավագիտություն): Արդյո՞ք բավարար կլինի գրքի տեղեկատվությունը քննություն հանձնելու համար: Ի՞նչ այլ առաջարկներ կանեք. դասագրքի, դասապրոցեսի բարելավման համար:

Օգտավործված գրականության ցանկ

1. Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա, 1989, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=60503:
2. «Զեկույց Արևելյան Գործընկերության 6 երկների ժողովրդավարության քաղաքացիության և մարդու իրավունքների կրթության քաղաքականության և փորձառության մասին» (օգտագործված է անգլերեն տարբերակը “A Report on Education for Democratic Citizenship and Human Rights Education Policy and Practice in Six Eastern Partnership Countries”), 2016, https://rm.coe.int/1680703cf8:
3. Էլեոնորա Վիլեգաս-Ռեյմերս, «Կրթություն ժողովրդավարության համար: Դպրոցների դերը» (օգտագործված է անգլերեն տարբերակը “Education for Democracy: The Role of Schools), 1994:
4. Ժողովրդավարության ինդեքս 2018, http://www.eiu.com/Handlers/WhitepaperHandler.ashx?fi=Democracy_Index_2018.pdf&mode=wp&campaignid=Democracy2018.
5. «Ժողովրդավարության քաղաքացիական կրթության և մարդու իրավունքների կրթության մասին խարտիա», 2010, https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805cf01f:
6. Կայուն զարգման նպատակ 4, 2016, http://un.am/hy/p/sustainable-development-goal-4:
7. Կոռուպցիոն կատարման ինդեքս 2018, https://www.transparency.org/cpi2018.
8. ՀՀ Կրթության մասին օրենք, 2009, https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908:
9. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 2015, http://www.president.am/hy/constitution-2015/:
10. «Հասարակագիտություն, Հանրակրթության ավագ դպրոցի չափորոշիչներ և ծրագրեր», 2009թ.:
11. Ղազինյան Գ., Վաղարշյան Ա., Գյուլբուդաղյան Ա., «Հասարակագիտություն 11», 2015, http://online.fliphtml5.com/fumf/jrlc/#p=146.
12. «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա»,https://www.echr.coe.int/Documents/Convention_ENG.pdf:
13. «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր»,

1948, http://www.un.am/res/Human%20Rights/Armenian%20Documents/UDHR_arm.pdf
14. «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միգազգային դաշնագիր», 1966, http://www.un.am/res/UN%20Treaties/III_3.pdf:
15. «Տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքների միջազգային դաշանգրի ընդհանուր մեկնաբանություն N13. Կրթության իրավունք», 1999, https://www.refworld.org/docid/4538838c22.html: